«Հաստատում եմ»
Դպրոցի տնօրեն՝ ———— Ս. Պողոսյան
30. 08. 2023թ.

«ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ Ե.ՉԱՐԵՆՑԻ ԱՆՎԱՆ N5 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ, VIII ա ԴԱՍԱՐԱՆ

ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

2023 – 2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ

ԴԱՍՂԵԿ՝ Խառատյան Գ.

ԿՐԹԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.Դասարանի ընդհանուր բնութագիրը ուսումնական տարվա սկզբին .

2023-2024 ուստարում 8-րդ ա դասարանում սովորում է 34 աշակերտ՝ 22 տղա, 12՝աղջիկ: Աշակերտները դպրոց են հաճախում սիրով, կանոնավոր, անհարգելի բացակայություններ չկան: Աշակերտները սիրով են կատարում հանձնարարությունները, հաճույքով մասնակցում դասերին:

Աշակերտական ակտիվի և ծնողական խորհրդի ջանքերով ձևավորվել է ընկերասիրության, փոխադարձ օգնության և հանդուրժողականության կուռ և ամուր միասնություն:Աշակերտները շատ պատրաստակամ են, սիրում և հարգում են միմյանց և ուսուցիչներին:

2.Ուսումնա-դաստիարակչական նախատեսվող աշխատանքներն ուսումնական տարվա ընթացքում.

● Ձևավորել դասարանական անկյուն և ընտրել դասարանի ակտիվ՝ ավագ և ավագի օգնական, ԱԽ-ի անդամներ:

● Վարքի, վարվեցողության, կուլտուրայի և բնավորության ճիշտ գծերի դաստիարակում:

● Դասարանական կարգապահական նորմերի, հերթապահության, հասարակական աշխատանքների կազմակերպում և իրագործում:

● Հաճախակի հանդիպում ծնողների հետ: Ծնողների ներգրավում ուսումնադաստիարակչական աշ – խատանքներում:

●Դպրոցական,դասարանական և արտադպրոցական միջոցառումների կազմակերպում և անցկացում:

●Կազմակերպել էքսկուրսիաներ, դիտումներ, զրույցներ,ստեղծագործական բնույթի տարբեր աշխա-տանքներ՝աշակերտների գեղագիտական ճաշակը բարձրացնելու նպատակով:

●Ամուր և համերաշխ դասարանական և ծնողական կոլեկտիվ ձևավորելուն միտված աշխատանքների իրականացում:

3 . Հայեցի դաստիարակություն

3.1. Հոգևոր դաստիարակությունն. Արժևորել մարդու դրական հատկանիշները,առաքինությունները:

Ձևավորել ու ամրապնդել աշակերտների պատկերացումները բարու և չարի նկատմամբ: Անցկացնել զրույցներ, քննարկումներ ազգային սովորությունների, եկեղեցական տոների մասին:
Աշակերտների դաստիարակության առանցքը դարձնել հայապահպանության, հայրենիքի հզորացման և շենացման գաղափարը: Ամրապնդել սեր հոգևոր –մշակութային արժեքների նկատմամբ:

3.2.Գեղագիտական դաստիարակություն.

Զարգացնել գեղեցիկը տեսնելու, զգալու, ճանաչելու ունակություն: Կազմակերպել էքսկուրսիաներ, ցուցահանդեսներ, լսել երաժշտություն, ծանոթանալ արվեսագետների կյանքին և արվեստի նմուշներին: Սովորողների մոտ ամրապնդել գեղագիտական բարձր ճաշակ: Անցկացնել մշակութային տեսահոլովակների դիտում-քննարկումներ, այցելել թանգարաններ, պատկերասրահներ և պատմամշակութային տարբեր վայրեր:

3.3.Ռազմա-հայրենասիրական դաստիարակություն.

Սովորողների մեջ ամրապնդել սեր և հպարտություն հայոց բանակի, զինված ուժերի և մերօրյա հե – րոսների նկատմամբ: Կազմակերպել և անցկացնել զրույցներ ազգային հերոսների և նրանց կատա – րած սխրագործությունների, նրանց անցած ուղու մասին:

3.4.Ֆիզիկական դաստիարակություն.

Ֆիզիկապես ուժեղ,կոփված ու մարտնչող հայի կերպարը դարձնել սովորողների դաստիարակության գլխավոր առանցքը: Անցկացնել զրույցներ քննարկումներ սպորտային հաջողություններ գրանցած մարզիկների մասին: Կատարելագործել աշակերտների հիմնական շարժողական ունակությունները: Կազմակերպել մարզական խաղեր, հետևել, որ սովորողներրակտիվ մասնակցեն ֆիզկուլտուրայի դասերին:

3.5.Աշխատանքային դաստիարակություն.

Յուրաքանչյուր սովորողի մեջ ամրապնդել սեր ու հարգանք աշխատանքի նկատմամբ:Նշանակել հերթապահներ, հսկել նրանց աշխատանքները: Դաստիարակել սեր և հարգանք շրջապատի մարդկանց աշխատանքի հանդեպ: Գիտակցել, որ բոլոր աշխատանքներն էլ կարևոր են:Ձևավորել նոր մտածելակերտ աշխատանքի հանդեպ:

3.6.Բնապահպանական դաստիարակություն.

Բնության հանդեպ սերը դարձնել սովորողների բարձրարժեք մտածողության մի մասնիկը:
Դաստիարակել խնամք, հոգատարություն շրջակա միջավայրի հանդեպ: Ծանոթացնել բնությանը, նրա գեղեցկությանն ու օգտակարությանը, նրա մեջ տեղի ունեցող երևույթներին: Անցկացնել զրույցներ,կազմակերպել գիտա-ճանաչողական էքսկուրսիաներ:

4.Դպրոց-ընտանիք կապը.

Բարձրացնել դպրոցի և ընտանիքի սերտ համագործակցությունը:Ծնողների միջոցով տեղեկանալ աշակերտներից յուրաքանչյուրի ընտանեկան, սոցիալական խնդիրներին,հնարավորինս աջակցել՝ լուծելու որոշակի խնդիրներ: Աշակերտների համար դպրոցը դարձնել հարազատ և ցանկալի վայր:
Մշտական կապ պահպանել ծնողների հետ:

Դասղեկի աշխատանքի փուլային նկարագրություն

Ուսումնական տարվա սկիզբ

1.Կազմել աշակերտների անվանացանկը

2.Վերստուգել կամ պատրաստել դասարանի սոցիալական անձնագիրը

3.Սպառիչ տեղեկություններ հավաքել դասարանի աշակերտների՝ այլ հաստատություններում լրացուցիչ կրթության մասնակցության մասին

4.Կազմել դասարանի դաստիարակչական աշխատանքի պլանը

Ամենօրյա աշխատանք

1.Վերահսկել աշակերտների բացակայությունները

2.Հետևել կարգապահությանը,վարքին

3.Հետևել հերթապահությանը դասարանում

4.Նպաստել,որ աշակերտները մասնակցեն դպրոցում անցկացվող միջոցառումներին

5.Աշխատանք տանել դժվար դաստիարակվող,սոցիալապես անապահով վիճակում գտնվող և ծնողազուրկ աշակերտների հետ.

Ամենշաբաթյա աշխատանք

1.Ստուգել աշակերտների առաջադիմությունը

2.Անցկացնել դասղեկական ժամեր

Ամենամսյա աշխատանք

Ծնողական ժողովների անցկացում

Դասալսումներ

Արտադասարանական աշխատանքներ

Կիսամյակային աշխատանք

Կիսամյակների ամփոփում

Բացակայությունների հաշվում

Անձնական գործերի լրացում

Տարեկան աշխատանք

Դասագրքերի բաշխում , հավաքում

Տարեկան հաշվետվություն

Աշակերտների բնութագրում

Էքսկուրսիաների կազմակերպում

Դասարանական անկյան ստեղծում

Դաստիարակչական աշխատանքներ		
Գործառույթները	**Նպատակն ու խնդիրները**	**Ուղղվածությունը**
1.Աշակերտի սոցիալական պաշտպանության գործառույթ	1.Դասարանական կոլեկտիվի ձևավորում	1.Քաղաքացիական պատասխանատվության ձևավորում, հարգանք երկրի պատմության և մշակույթի հանդեպ
2.Կազմակերպչական գործառույթ	2.Անհատի ձևավորմանը նպաստող, յուրաքանչյուրի անհատականությունը ողջունող և ներուժը բացահայտող միջավայրի ապահովում	2.Դասեր՝ նվիրված երկրին, քաղաքին, ազգային արժեքների ձևավորմանը, պետական և եկեղեցական տոներին
3.Աշակերտական ինքնակառավարման խթանման գործառույթ, որը երաշխավորում է նրանց ինքնուրույնության խթանումը	3.Առողջ ապրելակերպի վարքագծի ձևավորում	3.Գիտա-ճանաչողական էքսկուրսիաներ դեպի պատմական հուշարձաններ,թանգա բաններ, տեսարժան վայրեր
4.Ախտորոշման գործառույթ, որը ենթադրում է աշակերտների ելակետային մակարդակի վերհանում և շարունակական համեմատության մեջ փոփոխությունների արձանագրում	4.Դասարանում համակարգված աշխատանքի կազմակերպում	3.Վնասակար սովորույթների հանդեպ բացասական վերբերմունքի ձևավորում
6.Պլանավորման, ծրագրման գործառույթ, կանոնակարգում է մանկավարժական գործունեությունը, հեշտացնում է արդյունքների հետևողական	5.Աշակերտների, աշակևրտների ու մանկավարժների միջև բարյացակամ, ներդաշնակ փոխհարաբերությունների ձևավորում	4.Տարբեր խմբակների, զրույցների, կլոր-սեղան քննարկումների,բանավեճերի կազմակերպում

վերահսկումը		
	6.Աշակերտների արժեքային համակարգի ձևավորում և հայեցի դաստիարակություն	5. Իրավական գիտակցության և հանդուրժողականության խթանում, ես-ի և մենք-ի հստակ գիտակցում

ՈՒՍՈՒՄՆԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական շաբաթներ	Ուսումնա-դաստիարակչական աշխատանքների բովանդակություն	Կատարման ամսաթիվ	Կատարողներ
I	Գիտելիքի օր:Նոր ուստարվա սկիզբ	սեպտեմբեր2023թ	Դասղեկ,դասարան
II	Անց-ել դաս-ն ժողով:Ընտրելդաս-ի ակտիվ,ԱԽ2 անդամ	սեպտեմբեր	---//---
III	Զրույց անկախության մասին	սեպտեմբեր	---//---
IV	Անվտանգ երթևեկություն	սեպտեմբեր	---//---
V	Ուսուցչի օր, զրույց	հոկտեմբեր	---//---
VI	Ինչպես պաշտպանվել վարակներից	հոկտեմբեր	---//---
VII	Ծխախոտի եւ թմրանյութի վնասները	հոկտեմբեր	---//---
VIII	Տարերային և բնական աղետներ	նոյեմբեր	---//---
IX	Ինչ է իրավունքը: Ինչ իրավունքներ ունեմ	նոյեմբեր	---//---
X	Առաջին բուժօգնություն	նոյեմբեր	---//---
XI	Նրա մասին, ով ամենօր իմ կողքին է	նոյեմբեր	---//---
XII	Ինչ է ՁԻԱՀ-ը	դեկտեմբեր	---//---
XIII	Սպիտակի երկրաշարժի հետևանքները	դեկտեմբեր	---//---
XIV	Վատ սովորությունների հետևանքները	դեկտեմբեր	---//---
XV	Ամանոր և Սուրբ Ծնունդ	դեկտեմբեր	---//---
XVI	Արդարացի և անարտար արարքները	հունվար 2024թ.	---//---
XVII	Աշխատանքը ազնվացնում է մարդուն	հունվար	---//---

XVIII	Հայոց բանակ - 32	հունվար	---//---
XIX	Լավ մարտիկ ավելի շատ են քան…	փետրվար	---//---
XX	Տեառնընդառաջի խորհուրդը	փետրվար	---//---
XXI	Գրքերի աշխարհը տիեզերք է անեզր	փետրվար	Դասղեկ,դասարան
XXII	Կոնֆլիկտից խուսափելու ձևերը	փետրվար	---//---
XXIII	Ինչ է քաղպաշտպանությունը	մարտ	---//---
XXIV	Կանանց միջազգային տոն	մարտ	---//---
XXV	Հանդուրժողականություն	մարտ	---//---
XXVI	Ծիծաղի եւ հումորի օր	ապրիլ	---//---
XXVII	Ավետման եւ մայրության օր	ապրիլ	---//---
XXVIII	Դասը վարում է հոգեբանը	ապրիլ	---//---
XXIX	Հայոց մեծ Եղեռն	ապրիլ	---//---
XXX	Ինչպես հասնել հաջողության	մայիս	---//---
XXXI	Հաղթական մայիս	մայիս	---//---
XXXII	Իմ ընտանիքը	մայիս	---//---
XXXIV	Ուստարվա ամփոփում	մայիս	Դասղեկ,դասարան

ԴԱՍՂԵԿԻ ԺԱՄ

Շաբաթվա օրը	դասաժամը
Ուրբաթ	8-րդ ժամ

ԴԱՍՂԵԿ՝ /Խառատյան Գ./